25.08.2021
348-02

Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քերոբյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել այն կազմակերպությունների ցանկը, որոնք Նախարարությունից դրամաշնորհ և/կամ սուբսիդիա են ստացել 2020 և 2021 թթ. ընթացքում (առ օգոստոսի 23-ը ներառյալ)։

Խնդրում ենք տվյալները տրամադրել առանձնացված ըստ տարիների՝ նշելով յուրաքանչյուր կազմակերպության ստացած գումարի չափն ու նպատակը։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող.1/3, 4-րդ հարկ, Հեռ+37491407836, Էլ. հասցե՝foi@foi.amԿայք՝ www.foi.am